

մարտկապ մատուռ մը, որ հայոց կը վերաբերի (Հան. էջ 191):

Քրիստոսի պատմուճանին նկատմամբ կը գտնուին հետեւեալ աւանդութիւնները. Trèves-ի մէջ կայ պատմուճան մը զոր Հեղինէ թագուհին պարգև տուած է նոյն քաղաքին՝ որ իրեն հայրենիքն էր՝ և նոյն ժամանակները կայսրերու մայրաքաղաքը: Կենթագրուի թէ այն Իւղարեր կանայք որ Գողգոթա կը կենային խաչելութեան պահուն հռովմէացի հրեաներէն գնեցին Փրկչին հանդերձները, որոնք բարեպաշտօրէն պահուեցան Երուսաղէմի մէջ եւ Ս. Հեղինէին ընծայուեցան, երբ ան Ս. Երուսաղէմ ուխտի եկաւ:

Argentuil-ի մէջ եւս կը գտնուի պատմուճան մը որ առաջինէն աւելի կարճ է և ուղտի թելերէ հիւսուած: Տուրացի Գրիգոր եպս. ի (539-594) պատմութեան համաձայն, հաւատացեալք գտած են զայն, և որ յետոյ փոխադրուած է Գաղատիոյ քաղաքներէն մին, և ապա ի Յոպպէ, ուր գտնուած է 590 ին: Նոյն պատմուճանը մարմարէ սնտուկի մը մէջ էր, և Երուսաղէմ փոխադրեցին զայն Անտիոքի Գրիգոր, Երուսաղէմի Թովմաս, Կ. Պոլսի Յովհաննէս եւ ուրիշ եպիսկոպոսներ և ժողովրդեան բազմութիւն մը և պահեցին Ս. Սաշի մօտ: Ժամանակ վերջ, այս պատմուճանը Կ. Պոլսէն Մեծն Կարողոսի զրկուած է իրենէ կայսրուհիին կողմէն: Մեծն Կարողոս էր որ այս թանկագին մասունքը նուիրեց Argentuil-ի վանքին:

Յիսուսի չարչարանաց ժամանակ անոր կը հագցընեն «հանդերձ ծաղու», ըստ Մատթէոսի կարմիր, և ըստ Մարկոսի և Յովհաննու ծիրանի. այս ծաղրանքի հանդերձի մասին կային այս աւանդութիւնները, ու մանք կ'ըսեն թէ երկու հանդերձներ կային, կարմիր և